ԵՐԵՎԱՆ • ԵՒՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ԾԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO · WORLD SCHOOL · ECOLE DU MONDE

WE ARE A CIS INTERNATIONALLY ACCREDITED SCHOOL

«Շիրակացու Ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի
կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի
2026-2027 ուստարվա ընդունելության կանոններ

Ճեմարանի կիրակնօրյա նախապատրաստական դպրոց կարող են ընդունվել ընթացիկ ուստարում հանրակրթական դպրոցների 4-9-րդ դասարաններում սովորողները, ովքեր՝

- ձգտում են խորացնել և ամրապնդել գիտելիքները հանրակրթական առարկաներից,
- ցանկանում են աջակցություն ստանալ Ճեմարանի ընդունելության քննություններին նախապատրաստվելու համար:

Կիրակնօրյա դպրոցի պարապմունքները անցկացվում են հետևյալ առարկաներից.

- մաթեմատիկա,
- հայոց լեզու (մայրենի),
- ռուսաց լեզու,
- անգլերեն

8-րդ և 9-րդ դասարաններում սովորողների համար կարող են կազմակերպվել նաև պարապմունքներ բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) և հասարակագիտական (հայոց պատմություն, համաշխարհային պատմություն և հասարակագիտություն) առարկաներից:

Դասավանդվող առարկաների ծրագրերը համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչի և Ճեմարանի առարկայական ծրագրերի պահանջներին:

Կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի խմբերում ունկնդիրների թիվը, որպես կանոն, չի գերազանցում 20-ը: Խմբի պարապմունքները սկսվում են ամենաքիչը 5 սովորողների առկայության դեպքում:

Ուսումնական տարվա ընթացքում դիմողները ներգրավվում են գործող խմբերում: Խմբերում սովորողների թիվը 20-ից գերազանցելու դեպքում ձևավորվում է նոր խումբ:

Կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել Ճեմարանի էլեկտրոնային կայքում՝ https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSfcRnlOhn8smqy_Qg1kkeOXryTPo1i1ZPV7gcNfURDyvx1hww/viewform?usp=preview հղումով:

Դասընթացներին մասնակցող սովորողների ծնողների հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:

Դասընթացներին որպես ազատ ունկնդիր կարող են մասնակցել՝

ա/ երկկողմանի ծնողազուրկ

բ/ զոհված ազատամարտիկների

գ/ բազմազավակ (4 և ավելի երեխա) ընտանիքների երեխաները:

Պարապմունքները անցկացվում են Ճեմարանի փորձառու ուսուցիչների կողմից, առկա ձևաչափով, շաբաթը մեկ անգամ (կիրակի օրերին, անհրաժեշտության դեպքում պարապմունքները կարող են անցկացվել շաբաթ օրերին)։ 5-9-րդ դասարանների պարապմունքները անցկացվում են Ճեմարանի գլխավոր մասնաշենքում՝ Նոր Նորքի 5-րդ զանգված, Արտեմ Միկոյան փողոց 35, իսկ 4-րդ դասարանինը՝ կրտսեր դպրոցի շենքում՝ Նոր Նորքի 5-րդ զանգված, Մուշեղ Գալշոյան 15։

Հեռախոսներ՝ 010-680102, 055-403798: